




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4. ԿՈՒԼԻԿՈՎ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ

ՅԵԿ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՆՐԱՆՑ ԸԱՅԵՐԸ

Թարգմ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

2 P U S U P U 4 0 1 P B 0 1 7

Երևանի քաղաքի քաղաքապետարանի քաղաքապետի պաշտոնակատարի պաշտոնի վրա
Յ Ե Ր Ե Վ Թ Ե 1926

1926

331.7
4-80

15 JAN 2010

Պրակտիկական բաժնի, միացե՛ք.

Վ. ԿՈՒԼԻԿՈՎ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ

Բ Ա Տ Ր Ա Կ Ն Ե Ր Ի Ն

ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՆՐԱՆՑ ԸԱՎԵՐԸ

Թարգմ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական արհմիության կենտրոնական № 3

Յ Ե Ր Ե Վ Ս Ն

1926



Վ. ԿՈՒԼԻՈՎ,
Գյուղատնտ. և անասն. բանվորների
Համամիութենական կենտր. կոմիտեի
պատ. ֆարտուղար

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏՐԵՍԻ 1-ԻՆ ՏՊԱՐԱՆ

Դրուսեպար 438 ռ. պատ. 3042 Տիրած 3000

ՖԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գյուղատնտեսական և անտառային բանվորների արհմիության Հայաստանի Կենտրոնական Կոմիտեի, հրատարակելով ընկ. Վ. Կուլիկովի «Ինչպես կազմակերպել, դաստիարակել բառրակներին և պաշտպանել նրանց շահերը» գիրքը՝ նպատակ է ունեցել մի ձեռնարկ տալ մեր միության անդամներին և նրանց, վորոնք բառրակների կազմակերպության հետ կապված են վորևէ ձևով:

Այս գրքին նյութ է ծառայել ընկ. Կուլիկովի գեղուցումը, վոր տվել է Բելոռուսիայի բառրակային կոնֆերանսին:

Այստեղ ձարզ, կարճ ու հասկանալի լեզվով պատմված է այն բոլոր խնդիրների մասին, վորոնցով այնքան շատ հետաքրքրվում են բառրակները և պատասխանում է այն հարցերին, վոր ամեն ոք, ամեն տեղ գրված են բառրակային կազմակերպությանները գեղավարող ընկերների առաջ:

Այստեղ մանրամասն բացատրվում է, թե «Ինչպես պետք է կազմակերպել ու դաստիարակել բառրակներին, ու պաշտպանել նրանց շահերը»:

Այս գիրքը կբացատրի ընթերցողին, թե ինչ է անում մեր միությունը բառրակի համար և թե ինչ իրավունքներ ու պարտականություններ ունի միության մեջ մտնող բառրակը:



3932 84

Մյուս կողմից՝ Կենտ. Վարչությունն կարծում է, վոր այս գիրքը կարող է պարապմունքի նյութ լինել և մեր խմբակների համար:

Բատրակները կարող են իրենց պարապմունքների ժամանակ մի առ մի կանգ առնել այս գրքի զանազան դրուխների վրա, զրույցի, մտքերի փոխանակության և ուսումնասիրության նյութ դարձնել, ավելի լայնացնել շոշափած խնդիրները, վորով շատ ավելի մանրամասն կծանոթանան խնդիրներին և այն ժամանակ ամեն մի բատրակի պարզ կլինի մեր միության անելիքներն ու նպատակը և միության անդամի իրավունքներն ու պարտականությունները:

Ի վերջո պիտի հիշել, վոր ընկ. Կուլիկովի համա-նուն գիրքը թարգմանելիս արված են վորոշ կրճատում-ներ ու փոփոխություններ, մեր իրականությանը հա-մապատասխանեցնելու համար:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՇԱՅԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերներ, յես այստեղ յերեք հարց պիտի պարզեմ:
Առաջին—Ի՞նչ դրության մեջ է բատրակների կազմա-կերպման գործը, յերկրորդ—Ի՞նչ դրության մեջ է նը-րանց տնտեսական շահերը պաշտպանելու խնդիրը և յեր-րորդ—Ի՞նչ դրության մեջ է բատրակների դաստիարակ-ման գործը ու ի՞նչ պիտի անենք մոտիկ ապագայում այս յերեք հարցերի վերաբերմամբ:

Ընդամենը մի տարի յե, ինչ մեր միությունը սկսեց լայն չափերով կազմակերպել բատրակներին: Ի՞նչ ենք կարողացել անել այդ կարճ ժամանակի ընթացքում:

Մինչև այժմ մենք մեր միության շարքերում կազ-մակերպել ենք մոտ 771,000 հոգի, վորոնցից մոտ 75%-ը բատրակներ են: Սա փոքր թիվ չէ, բայց դեռ շատ անե-լիքներ ունենք: Ամենից առաջ պիտի ասել, վոր չնայած այս խոշոր թվերին, դեռ 2 անգամից ավելի բատրակներ կան, վորոնք կազմակերպված չեն: Յերկրորդ—մինչև այժմ մենք մեր կազմակերպությունը լայնացրել ենք—անդամների թիվն ենք ավելացրել, իսկ այժմ հարկա-վոր է դիտարկել ուղադրությունը դարձնել աշխատանք-ների խորացման վրա: Ահա այն խնդիրները, վոր այ-սոր դրված են մեր առաջ:

Վորպեսզի այս աշխատանքը հաջող ընթացք ունե-նա, հենց այժմ հարկավոր է ուղադրություն դարձնել մի շարք հարցերի վրա, վորովհետև այդ աշխատանքի հաջողությունը վորոշ չափով կապված է այդ հարցե-րի ճիշտ լուծումից:

ՄԻՆԶԵՎ ԱՅԺՄ ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂՆԵ-
ՐԸ ՅԵՂԵԼ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՅ
ԴՈՒՐՍ ՅԵԿԱԾ ԸՆԿԵՐՆԵՐ. ԲԱՏՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ
ՎՈՂՋՈՒՆԻ ԱՅԴ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից առաջ մի նայենք, տեսնենք, թե մեր միու-
թյան ղեկավարները ովքեր են: Թե մեր միության կեն-
տրոնական կոմիտեյում, թե նահանգական բաժիննե-
րում թե կենտրոնական և գավառական վարչություննե-
րում, ու չրջանային կոմիտեներում, ամեն տեղ մենք
կարող ենք գտնել յերկաթուղային, ջուլհակներին, կա-
շեգործներին և այլ ճյուղերի բանվորներ, բայց չառ քիչ
կտեսնենք գյուղատնտեսական բանվորներ: Այս վա՞տ և
թե՞ լավ:

Գյուղատնտեսական բանվորները (բատրակները,
հովիվները, խորհ. տնտես. բանվ. և այլն) ավելի հե-
տամնաց են, քան գործարանների բանվորները:

Զմոռանանք, վոր առանց քաղաքի ավելի գիտակից
ու առաջավոր բանվորների ողնության գյուղատնտեսա-
կան պրոլետարիատը չառ մեծ դժվարությամբ կարող
եւ կազմակերպվել:

Գյուղատնտեսական ու անտառային բանվորները
չառ ցրված են. նրանց համար դժվար և կազմակերպ-
վել: Գյուղատնտեսական ու անտառային բանվորները,
բատրակները, հովիվները, անտառապահները, խորհրդ-
ալի նտնեսությունների բանվորները և մասնագետ-
ները (գյուղատնտ. հողաչափները), այդ բոլորը բան-
վոր դասակարգի մի մասն են կազմում: Յեվ ահա, գյու-
ղատնտեսական ու անտառային բանվորները, վորպեսզի
հեշտությամբ կազմակերպվեն և արագությամբ հասնեն
քաղաքաների բանվորներին—իրենց դասակարգային յեղ-
բայրներին, նրանք՝ գյուղատնտեսական ու անտառային

բանվորները կազմակերպիչներ են վերցնում իրենց զար-
գացած դասակարգային բնկերներից: Յեվ չառ եւ լավ
են անում: Բատրակները հասկանում են, զգում են բան-
վոր դասակարգի կազմակերպված ուժը, բնկերական
համերաշխության և միաձուլության ուժը, վոր քաղա-
քի բանվորները մոցնում են գյուղատնտեսական պրոլե-
տարիատի կազմակերպության մեջ: Դա այդպես և և
չառ լավ է, վոր այդպես է:

ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԻՏԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ
ԱՃՈՒՄ Ե: ԻՐ ՄԻՋԻՅ ԱՐԴԵՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԴՈՒՐՍ
ԳԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՋՆԵՐ: ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵՆՔ
ՆՐԱՆՅ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՄ

Բայց դա ունի և իր վատ կողմը: Դրա վատու-
թյունն այն է, վոր կաշեգործ բանվորը վոչ հովիվ և
յեղել, վոչ փայտ կտրող, վոչ ալգի մշակող: Շատ ան-
գամ նա չի իմանում գյուղատնտեսական ու անտառա-
յին բանվորի աշխատանքի ու կյանքի պայմանները: Դրա
համար եւ նա ստիպված է սովորել, ուսումնասիրել այդ
բոլորը, վորպեսզի կարողանա ճիշտ գիծ բռնել և պաշտ-
պանել գյուղատնտեսական ու անտառային բանվորների
չահերը: Բատրակությունը պարզ կերպով արտահայ-
տում է իր կարիքները և դրանով իր կազմակերպիչնե-
րին ողնում է ճիշտ վճռելու գյուղատնտես. և անտա-
ռային բանվորների չահերի պաշտպանության հարցը:
Արդյոք միշտ այդպե՞ս պիտի լինի, միշտ քաղաքի բան-
վորները պետք է ղեկավարեն մեր կազմակերպու-
թյունը. իսկ գյուղատնտեսական ու անտառային բան-
վորները իրենց միջից աշխատավորներ չպիտի՞ առաջ
քաշեն: Ընդհակառակը, մենք պետք է վորքան կարելի
յե շուտով բարձրացնենք գյուղատնտես. և անտառային
պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը,

պետք է աստիճանաբար միութենական մարմինների մեջ քաջենք հենց իրենց՝ բատրակներին, հովիվներին, տընտեսությունների բանվորներին, անտառապահներին, մասնագետներին և այլն: Մեր տեղերը պիտի զիջենք գյուղատնտեսական ու անտառային բանվորներին գուրս յեկած պատրաստված ընկերներին: Մենք կարծում ե- յինք, վոր հենց այս տարի կարելի յե և պետք է սկսել այդ առաջ-քաշումը, ավելի մեծ չափերով, քան մինչև այժմ է յեղել: Ճիշտ է, մենք գիտենք, վոր վորոշ աշ- խատանքների համար գյուղատնտեսական ու անտառա- յին բանվորները դեռ ևս պատրաստված չեն, բայց և այնպես պետք է նրանց այդ աշխատանքների մեջ քա- շել, պետք է, տեղերում—միության շրջանային կոմի- տեներում առաջ քաշել բոլոր նրանց, վորոնք բատրակ- ների, հովիվների, խ. տնտեսությունների բանվորների շարքերում ակտիվացել, պատրաստվել են: Մեր միու- թյան ամեն մի վարչության մեջ պիտի ընտրել վարչ- թվով գյուղատնտեսական և անտառային բանվորներ, վորպեսզի այդ ընկերները աշխատել սովորեն, վարժվեն գործի մեջ և պատրաստվեն մեզ փոխարինե- լու:

Ահա այն հիմնական խնդիրներից մեկը, վոր այսօր դրված է մեր միության առաջ: Հարկավոր է համար- ձակ ու վճռական կերպով գյուղատնտես. ու անտառա- յին բանվորներին առաջ քաշել, ընտրել միութենական ղեկավար բանվորական մարմինների մեջ: Վոմանք ա- սում են, վոր այդ բանից սկզբնական չրջանում աշխա- տանքը կթուլանա: Գուցե և իսկապես այդպես կլինի, վորոշ տեղերում կարող է աշխատանքը տուժել, բայց թող այդպես լինի: Այդ բանից չպիտի վախենալ: Մեր ամենագլխավոր խնդիրներից մեկն այն է, վոր աշխատել սովորեցնենք նոր ընկերների, վորպեսզի նրանց հա-

մար հնարավորություններ ստեղծենք զարգանալու և աշխատելու, վորպեսզի նրանք սովորեն իրենց միու- թյունը ղեկավարել:

ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԱՄՐԱՊԵՏԻԵԼ ՈՒ ԼԱՎԱՑՆԵԼ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ԲՋԻՋՆԵՐԻ—ԲԱՆՎՈՐ-ԿՈՄՆԵՐԻ, ԲԱՏ-ԿՈՄ- ՆԵՐԻ ՅԵՎ ՇՐՋԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Այս աշխատանքի հետ միաժամանակ մենք պիտի աշխատենք նաև բարձրացնելու մեր պրոֆըշիյների աշ- խատունակությունը: Ընկերներ, մենք այժմ ամբողջ խորհրդային միության մեջ 21 հազարից ավելի միու- թենական պրոֆըշիյ ունենք: Դրանցից 12 հազարից ա- վելի բատրակկոմներ են, մոտ 2 և կես հազար չրջանա- յին կոմիտեներ, իսկ մնացած 6 և կես հազար բանվո- րական կոմիտեներ են (խորհրդային տնտեսություննե- րում, անտառապետություններում) և տեղկոմներ հիմ- նարկություններում և այլն: Ինչպես տեսնում եք, սա խոշոր թիվ է: Անցյալ տարվա համեմատությամբ նա աճել և յերկու անգամից ավելի: Շուտով մենք կունե- նանք վոչ թե 21 հազար, ալ 30 հազար, գուցե և ավե- լի: Յեթե նկատի ունենանք, վոր մեր Հանրապետու- թյունների միությունը մոտ 6 հազար չրջան ունի, ապա պարզ կլինի, վոր այժմ ամեն մի չրջանում կան մոտ 4 բլիշ, իսկ մոտիկ ապագայում ավելի կլինեն: Մեր պրոֆ- կազմակերպությունների քիվը աճում է: Մենք ցանկա- նում ենք ամրապնդել այդ կազմակերպությունները, բարձրացնել նրանց հեղինակությունը և աշխուժաց- նել աշխատանքը: Մեր կազմակերպությունները ուժե- դացնելու և աշխուժացնելու միջոցներից մեկն էլ պիտի լինի բատրակներին առաջ քաշելը, վորի մասին տավեց վեոհում:

ՊԵՏՔ Ե ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ ՂԵԿԱՎԱՐԵԼ ՈՒ ՈԳՆԵԼ, ՅԵՎ,
ՎՈՉ ԹԵ ՀՐԱՄԱՅԵԼ, ԿԱՐԳԱԴՐԵԼ

Բայց դա դեռ քիչ է: Հարկավոր է ուրիշ ճանապարհներ ել գտնել: Իսկ վորո՞նք են այդ ճանապարհները: Ընկերներ, ամենից առաջ մենք պետք է շտապ կերպով վերացնենք այն հիվանդոտ կողմերը, վոր կան մեր միութենական բջիջներում: Ահա թե, որինակի համար, ինչ տեստ յես մի շրջանում, վորտեղ յեղել եր կոնֆերենցիա և քննարկել եր շրջ. կոմիտե: Կոնֆերենցիայից հետո ուղիղ հինգ ամիս եր անցել, բայց շրջանային կոմիտեն դեռ վոչ մի անգամ չեր հավաքվել: Յերբ յես հարցրի նախագահին, թե ինչու կոմիտեն չի հավաքվել, նա պատասխանեց. «յես շրջանային կադմակերպիչ եմ, ժամանակ չունեմ այդպիսի գործերով զբաղվելու»: Ահա այսպիսի հիվանդոտ յերեույթները պիտի վերացնել: Թե շրջանային և թե մի վորեկ ուրիշ կադմակերպիչ ամենից առաջ պիտի կարգի բերի ու կանոնադրի այն կադմակերպությունների աշխատանքները, վոր կան նրա շրջանում: Դա նրանց անմիջական պարտականությունն է: Յերբե՞ն ել նկատվում է, վոր շրջանային կոմիտեները «հրամանատարություն» են նում: Այդ ել պիտի վերացնել: Շրջանային կոմիտեները վոչ թե հրամանատարներ են, այլ ղեկավարներ են: Նրանք ավագ ընկերներ են. պետք է ղեկավարեն, ոգնեն և վոչ թե հրամայեն:

ՎԱՏՆՈՒՄՆԵՐԸ ՄԵԾ ԶԱՐԻՔ ԵՆ. ՆՐԱՆՅ ԴԵՄ ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ՅԵՎ ԱՄԵՆԻՅ ԱՌԱՋ ՊԱՅՔԱՐՈՂԸ ՊԻՏԻ ԼԻՆԵՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ: ԻՍԿ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԱՎԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեզ մոտ մի ուրիշ չարիք ել կա. մի խոչոր չարիք: Դա վատնումներն են: Յես այստեղ չեմ բերի վատնում-

ների գումարը: Այդ գումարը ինքնին մեծ չի, վորովհետեւ ընդհանրապես մեզ մեծ գումարներ չունենք, բայց վատնումների թիվը մեծ է: Այդ վատնումների դեմ ամենախիստ կերպով պայքար պիտի մղել: Ի՞նչ պիտի անել այդ վատնումները վերացնելու համար: Հարկավոր է, վոր միութենական աշխատողները վորքան կարելի յե հաճախ ժողովներ գումարեն և հաշիվ տան, միութենական մասնային տեղյակ պահեն բոլոր աշխատանքների մասին և մասնավորապես դրամական հաշիվների մասին: Պետք է միության դրամական միջոցների հաշիվետվությունը—ֆինանսների խնդիրը որակարգում դրվի վորպես առանձին խնդիր: Պետք է պատմել ու բացատրել, թե միության ամեն մի կոպեկը ո՞ւր և ինչի՞ համար է գնացել: Վաս է այն միութենական աշխատողը, վորն այդպիսի հաշիվետվություն չի տալիս:

ՊԵՏՔ Ե ՈՒԺԵՂԱՅՆԵԼ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՒՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հասկանալի յե, վոր պետք է վերստուգիչ հանձնաժողովն աշխատի այնպես, ինչպես վոր պետք է: Մեզ մոտ, գծրախտարար, հաճախ բոլորովին հակասակն և արվում: Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է, բայց հաճախ նա մոռանում է, վոր ինքը վերստուգիչ հանձնաժողով և ու բոլորովին չի հավաքվում: Այդպիսի վերստուգիչ հանձնաժողովներին պետք է պատասխանատվության յենթարկել: Նա պետք է ամենախիստ վատնումի և անկանոն գործունեյության մասին հայտնի միութենական համապատասխան մարմիններին: Վերստուգիչ հանձնաժողովը—դա միության մշտական հսկողությունն ու նրա աչքն է: Միության անդամները շատ լուրջ ու չաղրություն պիտի դարձնեն վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքների վրա:

ԱՎԵԼԻ ՇԱՏ ՊԻՏԻ ՀԱՎԱՔԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՍԱՅԱ-
ԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՎԵԼԻ ՇԱՏ ՊԻՏԻ ԴՆԵԼ ԱՅՆՊԵՍԻ
ՀԱՐՅԵՐ, ՎՈՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ-
ՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ

Մեր պրոֆբըշիշները աշխատանքները լավացնելու
համար մի ուրիշ ճանապարհ էլ կա: Դա այն է, վոր
մեր կարիքները պիտի մասնաշաղկապեն քննության նյութ
դարձնենք: Վերցնենք մի որինակ: Մոտենում է գո-
րունը, բատրակներ ու գյուղատնտեսական բանվորներ
վարձելու ժամանակը: Դժբախտաբար մեզ մոտ շատ քիչ
է պատահում, վոր հավաքեն բատրակներին ու հովիվ-
ներին և խոսեն նրանց հետ, թե այս տարի ինչպես պի-
տի տանել աշխատանքները—վարձելու պայմանները և
այլն: Դժբախտաբար մեզ մոտ շատ քիչ են քննության
առնում ամենակարևոր ու կենսական հարցերը, շատ քիչ
են հավաքում բատրակներին: Հարկավոր է ավելի շատ
և շուտ-շուտ հավաքել նրանց: Ահա հենց այդ մասնա-
շաղկապ աշխատանքի մեջ պիտի գտնել միությունն աշ-
խույժացնելու և բատրակների շահերն ավելի լավ պաշա-
պանելու միջոցներն ու ճանապարհները: Այդ աշխա-
տանքը պիտի համարել մեր միութենական պրոֆբըշիշ-
ների ամրապնդման ուղին: Յեռ ասացի, վոր մեզ 300
հազար միության անդամ բատրակ ու հովիվ ունենք:
Բայց պիտի պարզ ասել, վոր այդ 300 հազարը բոլորն
էլ հաստատապես միության անդամ չեն: Մենք պետք է
լավ կազմակերպենք այդ 300 հազարին: Հարկավոր է,
վոր նրանք բոլորը հասկանան, վոր նրանց ուժը միու-
թյան մեջ է, վոր հենց իրենց շահերի համար են հար-
կավոր միության ուժերը: Իսկ այդ բանը նրանք այնքան
շուտ կհասկանան, վորքան հաճախ մեր պրոֆ-կազմա-
կերպությունները իրենց ժողովներում կզբաղվեն բա-
րակներին հասկանալի ու սրտին մոտ խնդիրներով: Սա

շատ մեծ խնդիր է: Սրա մասին հարկավոր է մտածել:
Այս ճանապարհով կարելի չէ աշխույժացնել ու ամրա-
պնդել մեր պրոֆբըշիշները և դրա հետ նաև ամբողջ մի-
ությունը: Մեր միութենական աշխատավորների ուշա-
դրությունը պիտի դարձնել այս խնդրի վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՅՆՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՌՈՒ-
ՅԵԼ, ՎՈՐ ԿԱՐԵԼԻ ԼԻՆԻ ԳՈՆԵ ՓՈՔՐ ԶԱՓՈՎ ՈԳՆԵԼ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻՆ, ՅԵՐԲ ՆԱ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ Ե

Մեր միությունը միշտ վնաս է անում: Անդամա-
վճարների մուծումների գումարը չի կարող ծածկել այն
կազմակերպչական ծախսերը, վոր անում ենք մենք:
Շատ անգամ բատրակները չեն հասկանում, թե ինչու
համար են իրենց տերերից վերցնում այն 2% հատկա-
ցումը: Հարկավոր է բացատրել այդ թե՛ բատրակին թե՛
բատրակուհուն: Այդ բանը նրանք ավելի շուտ կհասկա-
նան, յեթե այդ 2%—ից վորոշ մաս իրենց անմիջական
կարիքների համար գործադրվի գործադրելության սե-
ղոնին, որինակ վորպես փոխոգգանձարկղի սկզբնական
մուծում: Մենք պետք վերանայենք մեր ծախսերը: Վո-
րոշ տեղերում մենք չափից ավելի չուայել ենք սկսել:
Հարկավոր է վերանայել մեր ծախսերը, վորպեսզի կա-
րողանանք ծանր բոլակներին ոգնության հոսնենք բա-
տրակին ու բատրակուհուն, գոնե հիսուն կոպեկով,
կամ մի ուրիշով: Սեղանային գործադրելության ժամա-
նակ այդ գումարը նրանց համար ահագին նշանակու-
թյուն կունենա:

ԱՎԵԼԻ ՊԻՏԻ ՈՒԺԵՂԱՅՆԵԼ ԿԱՊԸ ՅԵՎ ԱՎԵԼԻ ԿԵՆ-
ԴԱՆԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՏԱԼ

Հարկավոր է, վոր միության շրջկոմի քարտուղարի
հեղինակությունը բարձր լինի: Պետք է շրջկոմի քար-

տուղարի, վարչության ու նախագահության անդամները ավելի հաճախ լինեն տեղերում: Պետք է նրանք վոչ թե միայն ձեռն համար դնան տեղերը, այլ իսկապես պիտի ոգնեն տեղում աշխատանքը կարգավորել: Հարկավոր է, վոր յերբ չըջկոմի քարտուղարը գյուղ է գնում, յեթե վոչ բոլորի, գոնե բատրակներից մեծ մասի հետ խոսի, զրույց անի, վոր իր հուշատեղում նշանակի այն բոլորը, ինչ վոր պահանջում են բատրակները: Պետք է, վոր չըջկոմի քարտուղարը այդ պահանջների մասին հայտնի դավ. վարչությանը, կենտ-վարչությանը: Ահա մեր միության հիմնական անելիքը, վորպեսզի ամբողջովա՞ծ լինի այն հիմքը, վոր մենք դրել ենք մի ամբողջ տարվա ընթացքում: Ընկերներ, մենք այս տարի աշխատում էյինք ծավալել: Մենք հարց էյինք դրել ավելի շատ բատրակներ գրավել միության մեջ: Մենք նպատակ էյինք դնում ավելի ու ավելի շատ աշխատանքի պայմանագիր կնքել, ավելի շատ քնիչներ ունենալ, մենք լայնանում ու տարածվում էյինք: Այժմ յեկել է ժամանակը, յերբ պետք է խորանանք ու ամրապնդվենք մեր նվաճումների մեջ:

ԲԱՏՐԱԿՆԵՐԸ ՈՒԺԵՂ ԿԼԻՆԵՆ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԺԱՄԱ- ՆԱԿ. ՅԵՐԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԼԻՆԵՆ

Այն, ինչ վոր յես ձեզ ասացի, դա ուժեղացման, ամբողջացման և զրույթյունը բարելավելու ճանապարհն էր: Ընկերներ, անվիճելի յե, վոր մեր միության բատրակային աշխատանքը զարգացել է: Դեռ անցյալ տարի այս ժամանակ, իսկ վորոչ տեղերում էլ նույնիսկ որանից ուշ—կատկածում էյին, թե պե՞տք է սկսել բատրակային աշխատանքը թե վոչ: Այժմ վոչ վոք չի կատկածում, չի տատանվում: Այժմ բոլորը գիտակցում են, վոր բատրակները, վոր թվով մոտ 2 միլիոն են, իսկ

ընտանիքներով հաշված ավելի քան 6 միլիոն, զրանք բոլորն էլ բանվոր դասակարգի մի մասն են: Դա մի հակադասական բանակ է: Յեթե այդ բանակը կազմակերպվի, ամբողջովի և դատարարակվի, ապա նա կզատնա խորհրդային իշխանության ու կուսակցության հաստատուն հենարանը: Ամեն մի բատրակ առանձին վերցրած քույլ է, առանձին բատրակին հեշտ է հաղթել, կոտրել, բայց կազմակերպված բատրակին հաղթելն ու խաբելը հեշտ չի:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարի գյուղացիական անտեսությունները զարգացնելու նպատակով խորհրդային իշխանությունը մի շարք միջոցներ ձեռք առավ և ի միջի այլոց զբվեց նաև վարձու աշխատանքի հարցը: Այդ հարցը վճովեց այն հատուկ որենքով, վոր հրատարակվեց գյուղացիական անտեսություններում վարձու աշխատանք սպառազորելու կարգի մասին: Այժմ յես ցանկանում եմ խոսել ձեզ հետ այդ որենքի մասին, վորին մենք կանխանենք «Ժամանակավոր կանոններ»: «Ժամանակավոր կանոնները» այդ այն որենքն է, վոր հրատարակել է խորհրդային իշխանությունը և վոր վերաբերում է մեզ բոլորիս: Դա մի որենք է, վորտեղ գրված է, թե ինչպես պիտի վարձել բատրակին, ինչ պիտի վճարել նրան և այլն: Դա խորհրդային իշխանության այն որենքն է, վոր վորոչեց թե բատրակն իր վարձուից ամենապակասն ինչքան պիտի ստանա: Անհրաժեշտ է այնպես անել, վոր գոնե բատրակության գիտակից մասը գիտենա այդ «Ժամանակավոր կանոնները»:



3932 84

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ԼԱՅՆ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ
ԾԱՆՈԹԱՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԲԱՅԱՏՐԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ ԱՅՍՈՐ-
ՎԱ ԽՆԴԻՐՆ Ե

Այդ «Ժամանակավոր կանոնները» մեջ ասված է, վոր այն պայմանները, վոր բերված են «կանոններում», ամենապակաս չափերն են, վորից պակաս բառարակին վարձել չի կարելի, իսկ ավելի լավ պայմաններով վարձել կարելի չէ: Բառարակը պիտի պայմանագրի միջոցով ձևով բերի այդ պայմանները: Ահա թե ինչ է ասված այդ «Ժամանակավոր կանոններում». նրանք տարածվում են միայն այն գյուղացիական տնտեսությունների վրա, վորոնք ոժանդակ վարձու աշխատավոր են ոգտագործում: Սույն գյուղացիական տնտեսություններում պիտի կիրառվի Աշխատանքի Որենսդրությունը: Որենքով, չի կարելի առանց գրավոր պայմանագրի բանվոր պահել (աշխատանքի պայմանագիր): Հանցանք է, յեթե չկա գրավոր համաձայնություն: «Ժամանակավոր կանոններում» ասված է, վոր աշխատանքի պայմանագրի մեջ անպատճառ պիտի պարզ ասված լինի, թե ինչ աշխատանքի համար է վարձվում բառարակը և վորքան ժամանակով: Այն էլ ասենք, վոր չի կարելի գրել որինակ այսպես—«Ձատակից մինչև ջրորհնեք» կամ «գարունքից մինչև աշուն», «նախրաթողից մինչև հորթաթող»: Դրանք չառ անորոշ բաներ են: Պետք է շատ պարզ գրել որինակ այսպես—«մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը»: Յեթե այսպես չլինի, պայմանագիրը անորենք կբ համարվի: Պայմանագրի մեջ ցույց տրված պիտի լինի և աշխատավարձը, վոր չի կարող պակաս լինել պետության միևնույնից (ամենացածր աշխատավարձից, վոր հաստատել է պետությունը): Դրանից պակաս ընդհանրապես չի կարելի վճարել: Այդ որենքը շատ բան է տալիս, վորովհետև վարձողը բառարակին այդ վորոշված

չափից պակաս վճարելու իրավունք չունի: Մեր ամենատաջին անելիքն է լինելու—բացատրել բոլոր բառարակներին, վոր կա այդպիսի որենք և վոր այդ որենքը հենց «Ժամանակավոր կանոններն» են: Ամենից առաջ հարկավոր է, վոր բառարակների աշխատանքի պայմանը ավելի ցած չլինի նրանից, ինչ վոր ասված է «Ժամանակավոր կանոններում»: Ճիշտ այդպես էլ, բացի «Ժամանակավոր կանոններից» պիտի բացատրել և նրանց հրահանգները: Մենք պետք է մեզ համար պարզենք, վոր յեթե «Ժամանակավոր կանոնների» մեջ գրված է «վոչ պակաս պետական միևնույնի աշխատավարձից», այդ դեռ չի նշանակում, թե մենք չենք կարող գրածից ավելի վերցնել: Ընդհակառակն, մենք պիտի հիշենք, վոր «Ժամանակավոր կանոնների» մեջ պարզապես ասված է. բառարակը կարող է գրավոր պայմանագրերի միջոցով ավելի լավ պայմաններով վարձվել, քան թե ասված է որենքում: Ձի կարելի վարձել ավելի վատ պայմաններով, քան քե գրված է որենքներում, բայց ավելի լավ պայմանով, ի հարկե, կարելի չէ: Միուրյան անելիքն այն է, վոր նա, հենված «ժամանակավոր կանոնների» վրա՝ հետագայում կարողանա ավելի լավացնել բառարակների վարձման պայմանները:

Որինակ՝ մենք կարծում ենք, վոր աշխատավարձը պակաս չպիտի լինի պետական միևնույնից: Հարկավոր է, վոր աշխատավարձը տրվի գրամով և վոչ թե միևնույնից, ինչպես մեծ մասամբ տրվում է մինչև այժմ: Ամենաանձեռնտուն այն է, վոր աշխատավարձը տալիս են միևնույնից: Այդ ձևով խաբելն էլ հեշտ է: Հասկանալի չէ, վոր մենք չենք կարող մի տարվա ընթացքում այնպես ասենք, վոր ամեն տեղ աշխատավարձը փոքրով տրվի, բայց պիտի աշխատել և հասնել այդ գրությունը: Իսկ այն տեղերում, ուր վոր ստիպված ենք ժամանա-

կամորապես բնգունել միեւրբով վարձատրելու ձեր, այդտեղ ել պայմանագրում պիտի պարզ հիշատակվի, թե ինչ տեսակ ու ինչ հատկութեամբ միեւրբ սղիտի տրվի: Որինակ՝ յեթե տերը պարտավորվել է սալ ցորեն, պիտի գրել, թե ինչպիսի ցորեն է լինելու, գառժ թե վոչ, տեղական թե ալլ տեսակի: Յեթե չի դրվում այս ամենը աշխատանքի պայմանագրում, հետո, վճարելու ժամանակ անպատճառ վեճ ու դժգոհութիւնն է առաջանում: Տերն ասում է, վոր ինքը խոստացել է սալ կուրանի ցորեն, իսկ բատրակն ասում է, վոր տեղականն է խոստացել: Այդպիսի դեպքերում հարկավոր է գինը ցույց տալ: Գյուղական աշխատանքում մենք չենք կարող ութ ժամյա բանվորական որ պահանջել: Գյուղական գործն այդպես է, պահանջում է ամէկի յերկար աշխատել, որինակ՝ վորպեսզի խորձերը անձրեւի տակ չբնկնեն, ցորենի արտը չառ հասնելուց, ժամանակն անցնելուց չչորանա և հատիկները թափվեն, մի խոսքով գյուղում ամեն աշխատանք մի վորոչ պայմանի հետ է կապված և պահանջում է շուտ վերջացնել:

Բայց այս չի նշանակում, թե մենք բնգահանրապես չպիտի կարգավորենք բանվորական որը գյուղատնտեսութեան մեջ:

Որինակ. ձմեռը կարելի չէ աշխատել 8 ժամի սահմաններում, աշնան սեզոնին նույնպես կարելի չէ աշխատել 8 ժամ, յերբեմն էլ 9 ժամ: Իսկ ի՞նչպես գրել պայմանագրի մեջ: Պայմանագրի մեջ պիտի գրել, թե տարեկան միջին բանվորական որը 10 ժամ է, կամ 9 ժամ է: Իսկ դա ի՞նչ է նշանակում, ինչ դուրս կգա դրանից: Ահա թե ինչ: Խոտհարքների և հնձի ժամանակ, ասենք թե, բատրակը կաշխատի 12 ժամ, կամ նույնիսկ 15 ժամ, բայց դրա փոխարեն ձմեռը կամ աշնան մի մասը նա կաշխատի 8 ժամ: Ահա այսպիսով դուրս է

գալիս, վոր միջին բանվորական որը համար է 10 ժամի: Այսպիսով, մենք պետք է վորոչենք բատրակի ամբողջ տարվա բանվորական որը, վորպեսզի ամառվա համար ուրիշ ժամեր լինեն, իսկ ձմեռվա համար ուրիշ: Կարելի՞ չէ այդ անել, յնկերներ: Կարելի՞ չէ. և այս բանում մեզ կոպենն իրենք՝ բատրակներն ու հովիւները:

Պայմանագրի մեջ պիտի աշխատել ամէկացնել մեր իրավունքները, ամէկի, քան որենքն է տալիս: Յեւ դա հնարավոր է: Վերցնենք հազուստի հարցը: Այստեղ հարկավոր է ձեռակերպել բատրակի պահանջները: Կամ որինակ հովվի հարցը. հարկավոր է, վոր գյուղական համայնքը հովվին շնորհացնի, վոր նրա բանվորական հազուստը կանոնավոր տրվի և այնպիսի հազուստ, վոր անաքական լինի:

Հիմանդուտ հարց է և բատրակի բնակարանի հարցը: Հարկավոր է այնպես անել, վոր բատրակը չքնի գոմում, այլ, վոր նա մի անկյուն ունենա իր անկողնով: Շատ անգամ այս բանը չի հիշվում: Պետք է հովիվը իր մշտական բնակարանն ունենա և վոչ թե մի Յ որ տպրի իր մի տիրոջ տանը, մի Յ որ մյուս տիրոջ և այսպես շարունակ: Կերակրի, ուտելիքի հարցն էլ պիտի ձեռակերպել: Պետք է գրել պայմանագրում և այնպես անել, վոր բատրակին լավ կերակրեն, համենայն դեպս ամէկի վատ չկերակրեն, քան թե ինքը վարձուղն է կերակրվում: Բայց այս դեպքում էլ կարող են բատրակին նեղացնել: Որինակ, այսօր մի բատրակուհի պատմում էր, վոր իր տերերը իր հետ նստած ուտում են հատորակ, պատվա կերակուր, բայց հենց վոր ինքը դուրս է գալիս, իսկույն մեջտեղ են բերում համեղ կերակուրը: Հարկավոր է այնպես անել, վոր սնունդը լինի այնպես, ինչպես ասված է արեւմտում:

Իսկ որքենում պարզ կերպով գրված է, վոր բատրակն ել նույն սնունդը պիտի ստանա, ինչ վոր իր տերը—նույն չափի, նույն տեսակի:

Տեսեք, թե ինչպես են կերակրում հովիվին—այսօր մեկի մոտ, վաղը մյուսի և այսպես շարունակ: Բայց դուք ե հենց նույն տանը, ուր վոր այսօր հովիվը պիտի ճաշի, այդ տանը թոքախտավոր կամ մի ուրիշ հիվանդություն կա: Իսկ հովիվը ուզո՞ւմ է թոքախտավորի հետ նստել ճաշել: Ի հարկե մոչ, չե՞ վոր նա ել մարդ է, ուզում է առողջ լինել: Հարկավոր է հովիվների սնունդը այնպես կազմակերպել, վոր նրանք չքափառեն, մի տեղից մյուսը չգնան:

Հասկանալի չե, վոր դեռ շատ հարցեր կան բատրակներին ու հովիվներին կյանքից, բայց բոլորը չեմ գնում այստեղ: Մի հարց միայն հարկավոր է պարզել այստեղ: Այդ այն է, թե՞ բատրակն ու հովիվը պատասխանատու չեն արդյոք տիրոջ ունեցածի համար: Որքենքր այս հարցին տալիս է հետևյալ պատասխանը—«Այո, պատասխանատու չե, միայն այն դեպքում, յեթե տերը կապացուցի, վոր բատրակը գիտամար, թշնամարար է փչացրել այս կամ այն իրը: Վերջենք որինակ—բատրակը հերկ եր անում և աշխատանքի ժամանակ կտարվեց գութանը: Իրավո՞ւնք ունի արդե՞ր տերը այդ գութանի արժեքը կամ նրա մի մասը գուրս գալու բատրակի աշխատավորձից: Վո՞չ, վոչ մի իրավունք չունի: Իսկ ինչ պիտի անի, յեթե ուզում է կտարվածի արժեքը ստանալ բատրակից: Նա պետք է գատարանում ապացուցի, վոր բատրակը չար գիտավորությամբ, գիտամար և կտարել: Ասենք թե գատարանը քննեց և արդարացի բատրակին, ի՞նչ պիտի լինի: Այդ ժամանակ բատրակը իր տիրոջը պատասխանատվության կենթարկի իրեն բամբասելու համար:

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՍԵՁՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հետևյալ շատ կարևոր հարցը բատրակներին ու հովիվներին սեզոնային գործադրկությունն է: Հարկավոր է խոսել հատկապես ձմեռային սեզոնի գործադրկության մասին: Այդ սեզոնի գործադրկությունը առանձնապես ծանր է բատրակներին ու հովիվներին համար: Ամառը ելի մի կերպ կարելի չե վարձվել, բայց ձմեռը շատ դժվար է: Ձմեռվա կարիքի ժամանակ հարկավոր է ոգնել բատրակին: Իսկ ինչե՞ս ոգնել: Ամենից առաջ պետք է գնալ սոցիալական ապահովագրության գծով: Ի հարկե, չի կարելի սպասել, վոր սոց—ապահովագրությունը ամբողջ չարիքն արմատախիլ անի, բայց ելի կարծում ենք, վոր սոցիալական ապահովագրությունը հնարավորություն կտա մեզ սեզոնային գործադրկության ժամանակ 200—300 հազար բատրակների բաժանել 1 և կեսից 2 ուրբի: Ի հարկե, մեծ փող չի այս 1 ու կես 2 ուրբին, բայց ինչ ել լինի, այդ փողով կարելի չե գնել մեկ փութ ալյուր և մի կերպ յորա գնալ: Սոց. ապահովագրության որքենքր այժմ քննվում է և մենք կարծում ենք, վոր շուտով կհաստատվի: Ելի ի՞նչ կարելի չե անել, բատրակին սեզոնային գործադրկության ժամանակ ոգնելու համար: Մենք կարծում ենք, վոր հարկավոր է ոգնել բատրակներին, վոր նրանք այդ ժամանակ գործ գտնեն փայտի աշխատանքի մեջ, անտառում: Ասում են բատրակը վոչ կացին ունի և վոչ սղոց: Շատ ճիշտ է. գրա համար ել հարկավոր է այնպես անել, վոր լինեն հարկավոր կացինն ու սղոցը: Տնտեսական կազմակերպությունները պիտի հոգ տանեն այս մասին: Ապա պետք է յերկաթուղու գիծը ձյունի կույտերից մաքրելու համար առաջին հերթին վերցնել բատրակներին: Մենք գնում

Ենք այս հարցերը և կարծում ենք, այս ուղղութիւնով
վերջը բան կարող ենք անել: Բացի այս բոլոր միջոց-
ներէից հարկավոր և նաեւ կարգավորել բաւարակների
տեղափոխուման հարցը: Ի՞նչ և նշանակում այս: Նշա-
նակում է, յեթե մի տեղ ավելորդ բանավորական ուժ
կա, իսկ մի ուրիշ տեղ աշխատող ձեռքեր չի ճարվում.
պետք և այնպէս անել, վոր բաւարակները հեշտու-
թիւնով ատաղին տեղից յերկրորդ տեղը գնան: Իսկ
ի՞նչպէս կարգավորել ու կազմակերպել այդ տեղա-
փոխման խնդիրը: Մենք կարծում ենք, վոր ամենից
առաջ հարկավոր և տարածել շրջանային թղթակցու-
թիւններին կեանքը: Այդ կեանքը ցույց կտան, թե
վերտեղ բանավորական ուժի կարիք կա և վորտեղ ավե-
լորդ ուժեր կան: Ապա հարկավոր և տեղափոխման
համար արտոնյալ իրավունքներ ձեռք բերել և մի շարք
ուրիշ միջոցներ ձեռք առնել փոխադրութեան պայ-
մանները յաւանդելու համար: Ներկայումս կառավա-
րութիւնը զբաղված և այդ նպատակի համար վերջ
գումար տրամադրելու խնդրով: Կարծում ենք, վոր
բայց կթողնվի վերջը գումար, փոխադրուման հարցը
կարգավորելու համար:

Մինչև այժմ յետ պատմում էյի, թե միութիւնն
ինչ միջոցների յետ գիմում, վոր մեր Խորհրդային կազ-
մակերպութիւններից ու հիմնարկներից վերջը ոգնու-
թիւն ստանա բաւարակների համար, նրանց սեզոնային
գործադրութեան դեպքում: Այժմ տեսնենք, թե միու-
թիւնն ինչ և արել իր միջոցներով: Ամենահիմնականը
— փոխադրութեան գանձարկը և: Ամառը, յերբ բաւ-
արակը աշխատանք ունի, այնքան էլ դժվար չե նրա հա-
մար իր աշխատավարձի 1 տոկոսը (մոտ 5—10 կ. ամ-
սական) տալ գանձարկին: Իսկ ձմեռը, յերբ նա նեղ
գրութեան մեջ կլինի, այդ նույն գանձարկից ոգնու-
թիւն կստանա:

Մենք կարծում ենք, վոր փոխադրութեան գան-
ձարկներն այնպէս պիտի կազմակերպել, վոր բաւ-
արակը կարողանա իր ուզած ժամանակ ոգնութիւն
ստանալ նրանից: Մեր փոխադրութեան գանձարկները
պիտի ոգնեն մեզ ներքին ուժերով կովել սեզոնային
գործադրութեան դեմ: Հասկանալի չե, վոր այդ հար-
ցի լիակատար լուծումը շատ դժվար և, իսկ այն մի-
ջոցները, վոր ձեռք են առնվում, այսօրվա—վաղվա
խնդիր չեն, բայց շատ մոտ ապագայում իմ բոլոր
առածները անպատճառ կիրականանան:

Միութիւնն այդ խնդիրը որվա հարց և զարմնում
և դուք այս ձմեռ կտեսնեք, վոր այդ ձեռք առած մի-
ջոցները զգալի չափով կթեթեացեն ձեր գրութիւնը:

ԲԱՏՐԱԿԸ ՊԵՏՔ Ե ԴԱՌՆԱ ԳՐԱԳԵՏ ՅԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԻՑ ԱՆԴԱՄ

Վերջին հարցը, վորի վրա յետ ուղում եմ կանգ
առնել, դա բաւարակութեան գաստիարակման հարցն է:
ԽՍՀՄ-ում անդրադեռ բաւարակների միջին տոկոսը
քիչ չե, կազմում և բնականուրի (60) տոկոսը: Բոլոր
բաւարակներին կեանք ավելին անդրադեռ են. վոչ կար-
գալ գիտեն և վոչ գրել: Հասկանալի չե, վոր բաւարակ-
ներին գաստիարակելու տապալկում մեր առաջին ա-
նելիքն և, նրանց գրել կարգալ սովորեցնելը: Պարզ և,
վոր այստեղ էլ միութենական կազմակերպութիւնը
մի շարք միջոցներ պիտի ձեռք առնի՝ ոգնելու համար
բաւարակներին և իսկապէս, վորոչ միջոցներ ձեռք են
առնվում: Այժմ 300 հազար սրինակ բաւարակային
այլբենարան և տպվում: Ասում են, վոր դրանք ԽՍՀՄ-
ում լույս տեսած այլբենարաններից ամենալավերիցն են:
Այդ բաւարակային այլբենարանը հենց առաջին քայլա-
փոխին անդրադեռ բաւարակին հասարակական ոգտա-

կար գիտելիքներ կտա: Ինչե՞ս պետք է վարվենք այդ ալբերենարանի հետ: Վորպեսզի կարողանան մյուս հանրապետութիւններում ոգտագործել այդ ալբերենարանը, հարկավոր է թարգմանել մյուս ազգերի լեզուներով, որինակ՝ ուկրալերեն, հայերեն, թուրքերեն և այլն: Մենք պետք է ձրի բաժանենք միութեան անդամներին այդ ալբերենարանը, 1 մատիտ ու 6—7 թերթ գրելու թուղթ: Մենք կանենք այն ամենը, ինչ վոր մեզանից է կախված, վորպեսզի բաւարակը վերացնի իր անգրագիտութեանը: Չի կարելի հույս դնել միայն լիկկայանների վրա: Պետք է յայնորեն ոգտագործել ինքնագործութեան ուղին: Վերցնենք որինակ մեր գյուղթղթակից բանվորին: Յեթե մի բաւարակ խնդրի նրան իր համար վորեւէ նամակ գրել, նա հոկզրի: Դա արվում է վորպէս բնկերական սցնութեան: Դե ուրեմն, թող այդ նույն գրագետ գյուղ-թղթակիցը, վոր թուղթ ու մատիտ ունի, թող ոգնի անգրագետին գրել կարգալ սովորել: Կամ, որինակ գյուղական ԼԿՅԵՄ բջիջներից ամեն մեկը կարող է մի անգրագետ բաւարակ վերցնել և նրան գրագետ դարձնել: Չմոռանանք, վոր մենք գատախարակման աշխարհի մի հզոր գէնք ունենք, ինչպիսին «Բաւարակ» լրագիրն է: 1917 թվին Վլադիմիր Իլյիչ Լենինն տաւ մեր, վոր գործը սկսելու համար հարկավոր է թերթը հրատարակել շաբաթը մեկ անգամ, բաղկացած մի թերթից: Այժմ մենք լույս ենք բնծայում այդ լրագիրը շաբաթական 2 անգամ: Մենք չենք ուզում ամէլի շուտ շուտ լույս բնծայել, վորովհետեւ բաւարակը ժամանակ չի ունենալ կարգալու: Այդ լրագիրն ունի 100,000 տիրաժ, բնթերցողների մի հսկայական թիւ: Նա արտացոլում է գյուղատնտեսական ու անտառային պրոլետարիատի բոլոր կարիքներն ու պահանջները: Սրանից հետո, յես

կարծում եմ, վոր միութեան գլխավոր անելիքներից մեկն էլ պիտի լինի «ժամանակավոր կանոնները» մասսայականացումը: Անվիճելի յէ այժմ, վոր բաւարակների ճնշող մեծամասնութեանը չգիտէ «ժամանակավոր կանոնները» և այդ չգիտենալուց հաճախ աշխատանքի ամէլի վատ պայմանների մեջ է բնկնում: Այդ կանոնների մասսայականացման, բոլորին բացատրելու և հասկացնելու հարցը շատ լուրջ կերպով պիտի մեր գրագմունքի առարկա դառնա:

Ահա ամենաեղականը, վոր յես ցանկանում եյի տեսլ մեր կատարած ու կատարելիք աշխատանքները մասին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱԿԱՏԻ ԿՈՂՄՆԱԿԻՑ Ե

Թույլ ամէք այժմ մի քանի խոսք ել տեսլ մեր արտասահմանյան աշխատանքների մասին: Ամբողջ աշխարհում, չհաշված ԽՍՀՄ-ն, կան մի քանի տասնյակ միլիոն գյուղատնտեսական բանվորներ: Այդ տասնյակ միլիոններից կազմակերպված են մեկ միլիոնից վոչ ամէլին: Դուք տեսնում եք, բնկերներ, թե այդ աշխատանքներն ինչպէս վատ են գրված կապիտալիստական յերկրներում: Միայն մեր յերկրում մենք 700 հազարից ամէլի հոգի ու անտառի միութեան անդամ բանվոր ունենք. այսինքն՝ մոտավորապէս այնքան, ինչքան վոր կան կազմակերպված ամբողջ աշխարհում: Ի՞նչու յէ այդպէս. վորովհետեւ Խորհրդային իշխանութեանը ոգնում է բաւարակներին կազմակերպվել, վերացնել իրենց անգրագիտութեանը, գարգացնել իրենց գիտակցութեանը: Իսկ գերմանական կառավարութեանը, որինակ, Հինգենբուրգի*) գլխավորութեամբ, ամեն կերպ

*) Հինգենբուրգը Գերմանիայի կառավարութեան նախագահն է, իսկ Վլիշեյմ կայսրի ժամանակ նրա մտերիմ գնկերալն էր:

աշխատում է խանդարել բառերակների կազմակերպմանը: Նույն պատկերն է և Լեհաստանում*) և կապիտալիստական յերկրներում: Այնտեղ գյուղատնտեսական պրոլետարիատը բաժանված ու ջրված է գանազան բազմաթիվ մանր միությունների մեջ: Այնտեղ կան և քրիստոնեական և սոցիալ-դեմոկրատական միություններ, բայց չկան մի քնդհանուր միասնական միություն: Ահա այս պատճառով էլ մեր միջազգային աշխատանքի հիմնական նպատակն է բոլոր բառերակներին համախմբել մեր միության մեջ: Մենք պետք է ստեղծենք մի միասնական Խոտերնայիտայ, վորի մեջ համախմբված լինեն բոլոր գյուղատնտեսական բանվորները: Ահա այսպիսի նպատակ ենք դնում մենք: Ի՞նչ խաչերդռաներ կան մեր ճանապարհին: Սոցիալիզմները, արգելքները չառ մեծ են: Ամենահիմնական արգելքն այն է, վոր Արեմտյան Յեվրոպայում միությունների գլուխ կանգնած են ալիսի մարդիկ, վորոնք Եյուպեա թշնամի յեն բանվորական հեղափոխական շարժմանը: Գուցե դուք հիշում եք, վոր Լեհաստանում գյուղատնտեսական բանվորների գործադուլ տեղի ունեցավ, վորին մասնակցեցին մոտ 200 հազար բանվորներ: Մենք հետևում էյինք այդ գործադուլին, ուրախանում էյինք նրա մեկն մի հաջողության համար և տխրում էյինք մեկն մի անհաջողության համար: Մենք վորոչեցինք ոգնել Լեհաստանի գյուղատնտեսական բանվորներին: Վողջույնի նամակ և մի քիչ էլ վող (5000 ոտրլի) ուղարկեցինք, վորպեսզի ոգնենք նրանց վող միայն բարոյապես, այլ և նյութապես: Լեհաստանի միության ղեկավարները չքնդունեցին մեր վողը, հետ դարձրին այն, հայտարարելով, թե—վող վերցնել կարող են

*) Լեհաստանը խորհրդային յերկրի սահմանակից բարձուսական յերկր է:

միայն իրենց բարեկամներից, այսինքն միայն այն միություններից, վորոնք մտնում են Ամստերդամի Խոտերնայիտայի մեջ: Լեհական բառերակ բանվորները կարիքի մեջ էյին, բանվորները տառապում էյին սովից, բայց ինչ փույթ լեհական միության ղեկավարներին: Նրանք չուզեցին մեր փողերը հանձնել կարիքի մեջ գտնվող լեհական բառերակներին: Ընկերներ, հարկավոր և հիշել այս փաստը: Լեհական բանվորներն էլ պիտի հիշեն այս: Ինչքան էլ մենք աղքատ ենք, ինչքան էլ մեր դրությունը ծանր և, բայց էլի լեհական բառերակների ծանր ուրերին մենք մեր բառերակային սոցիալիստներ ցույց տվինք նրանց: Լեհական բանվորների գործադուլը սոսկալի պարտություն կրեց: Գյուղատնտես. արհմիության ղեկավարները հայտարարեցին, թե հարկավոր է դադարեցնել գործադուլը, իսկ յերրկուսի հունձը, այն ժամանակ նորից գործադուլ կսարքենք: Այս առաջարկությունը տարածայնություն մտցրեց գյուղատնտեսական բանվորների շարքերը և առաջացավ պառակտում: Գյուղատնտես. բանվորներն ստիպված էյին աշխատանքի գնալ: Ղեկավարներն էլ հենց այդ էյին ուզում: Յեվ հնձի ժամանակ էլ, իհարկե, նրանք վող մի գործադուլ հայտարարեցին: Իսկ ի՞նչ պատահեց գործադուլից հետո: Շատ բանվորների բանտարկեցին, շատ-շատերին չարանեցին փողոց ու անգործ թողին, իսկ մնացածներն էլ ստիպվեցին գնալ աշխատելու այն պայմաններով, վոր առաջարկում էյին տերերը: Լեհական բառերակների գործադուլը տանուլ տվեց: Հարկավոր է, վոր մեկն մի բանվոր, թե ալիստեղ, թե Լեհաստանում, յով իմանա, վոր այդ հեղափոխությունն անհաջող վերջացավ չնորհիվ լեհական արհմիության ղեկավարների դավաճան քաղաքականության: Դրանից հետո մենք էլի ցանկանում էյինք միասնական ճակատ ստեղծել: Մենք վորձեցինք կապ

տեղծել գյուղատնտեսական ու անտառային բանվոր-
ների ինտերնացիոնալի գործկոմի հետ, բայց նրանք
զբաղվել են գեմ գնացին: Մեր բոլոր գրությունները և մեր
առաջարկները մերժեցին, բայց դեռ այսօր ևլ մենք
ձգտում ենք նույն նպատակին, մենք ցանկանում ենք
համաշխարհային մասշտաբով ստեղծել գյուղատնտե-
սական ու անտառային բանվորների միասնական հա-
կառ և համոզված ենք, վոր կստեղծենք:

ԻՆՉ Ե ԲԱՏՐԱԿԸ

Յեւ իմ գեղարքման մեջ չչոչարեցի մի քանի հարցեր:
Առաջին հարցն է—ինչ և բատրակը: Շատ անգամ
հարցնում են, թե այդ բառը հո հայհոյանք չի: Մի ժա-
մանակ պրոլետարիատ բառն ևլ շատերի համար հայ-
հոյանք էր: «Չորան» բառը իսկապես հայհոյանք էր
հասկացվում: Նույնիսկ մեր հայերն ասում էին.
«Դե, աղա, խելքդ կաց, թե չե չորան կդարձնեմ քեզ»:
Իսկ բնդհակառակը, շատ պատվավոր էին, որինով,
այս բառերը—բեկ, աղա, կնյազ, խան և այլն: Բայց,
ընկերներ, այս բոլորը մինչև Հոկտեմբերյան հեղափո-
խությունն էր, յերբ վոր իշխանության գլուխ կանգ-
նած էին թագավորը, կապիտալիստն ու կալվածատե-
րերը: Հիմա բոլորովին ուրիշ բան է: Այժմ պրոլե-
տարիատի գիլիտատուրա յե: Այժմ բատրակ բառը
նույնքան հարգելի բառ է, ինչպես բանվոր, պրոլե-
տարիատ բառերը: Յեվ իսկապես, ինչ և բատրակը:
Դա գյուղատնտեսական բանվորն է: Չէ՞ վոր մետադի
մշակությամբ զբաղվող բանվորին ասում են մետաղա-
գործ, իսկ հանքերի ու քարածուխի մշակությամբ
զբաղվողներին լեռնագործ: Յեվ վոր վորքի մտքով ևլ
չի անցնում, թե պետք է այդ անունից նեղանալ: Յեվ

իսկապես, բատրակ բառը նույնպիսի պատվավոր բառ
է, ինչպես վոր մետաղագործ, գրաշար, լեռնագործ
և այլն:

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿՈՉՎԻ ՄԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Յերկրորդ հարցն է.—ինչպես կոչել մեր միու-
թյունը: Առաջ նա կոչվում էր Հոգանտառ Միություն:
Միության 5-րդ համագումարին փոխվեց միության
անունը և կոչվեց գյուղատնտեսական ու անտառա-տըն-
տեսության բանվորների միություն: Այդ անունը ավե-
լի լավ ու պարզ է ցույց տալիս, վոր մեր միությունը
համախմբում է գյուղական ու անտառային տնտեսու-
թյան մեջ վարձու աշխատանք տանող բանվորներին:

ԲԱՏՐԱԿԸ ՅԵՎ ԶԲԱՎՈՐ ՈՒ ՄԻՋԱԿ ԳՅՈՒՂԱՅԻՈՒ- ԹՅՈՒՆԸ

Հետևյալ հարցն է բատրակության ու գյու-
ղացիության և գյուղական տնտեսության ու
բատրակության հարցը: Ամենից առաջ պարզենք, թե
ոգու՞ւ է բատրակին, վոր գյուղացիական տնտեսու-
թյունը բարձրանա ու զարգանա: Յեւ կարծում եմ,
վոր ոգուտ է: Ինչո՞ւ. վորովհետեւ, բացի այն, վոր
բանվոր դասակարգն բնդհանրապես շահագրգռված է,
վոր գյուղացիական տնտեսությունը բարձրանա, մյուս
կողմից պիտի հիշել, վոր գյուղացիական լավ, հա-
րուստ տնտեսությունը ավելի շատ կարող է վար-
ձատրել, աշխատավարձ տալ:

Այն գյուղական տնտեսությունը, վոր 100 ուրլի
յեկամուտ ունի, հնարավորություն ունի բատրակին
տալու մոտ 10 ուրլի: Բայց յեթե նրա տնտեսությունն
այնքան բարձրանա, վոր ստանա 150 ուրլի յեկա-
մուտ, այն դեպքում կարելի յե նրանից պահանջել և նա

Եւ հնարավորութիւնս կունենաւ բառարակին փոխանակել 10 սուրբու տալ 15 սուրբի: Ահա թե ինչո՞ւ մեզ եւ ձեռնառու յե, վոր գյուղացիական տնտեսութիւնը աճի, զարգանա: Բառարակը պետք է ոգնի իր տիրոջը՝ բարձրացնել տնտեսութիւնը, բայց միաժամանակ նա պիտի հիշի, վոր այդ զարգացած տնտեսութիւնից վոչ վոք իր կամքով իրեն բաժին չի տալ: Գյուղացին իր կամքով բառարակի աշխատավարձը չի ավելացնի: Բառարակը գյուղացիական տնտեսութեան բարձրացումից իր բաժինը կստանա միայն այն ժամանակ, յերբ նա կազմակերպւած կլինի ու կզատնա միութեան անդամ: Պետք է տեսլ, վոր բառարակութիւնը շահագրգռւած է գյուղացիական տնտեսութեան բարձրացման մեջ, բայց միաժամանակ նա շահագրգռւած է, վոր այդ բարձրացումից իր բաժինը ստանա, վոր իր աշխատավարձն եւ բարձրանա: Իսկ դրա համար գյուղատնտեսական ու անտառային բանվորները պիտի կազմակերպուին: Մեր գյուղացիութիւնը միաժամբ գյուղացիութիւն չէ: Նրա մեջ կա եւ շքավոր, եւ միջակ եւ հարուստ: Հարց եւ արժում. ի՞նչ հարաբերութիւնների մեջ պիտի լինի բառարակը միջակ եւ աղքատ գյուղացիութեան հետ: Արդյոք պիտի կովի՞ նրանց դեմ եւ կա՞ պատճառ կովելու: Յետ կարծում եմ, վոր այս հարցին պիտի պատասխանել այսպես. միջակն ու աղքատը իրար դեմ կովելու վոչ մի հիմք չունեն: Նրանք բարեկամներ են, նրանք հավասարաշատի շահագրգռւած են խորհրդային իշխանութեան զարգացման ու ամրապնդման գործում: Աղքատ գյուղացին շատ է տոտապում, յերբ ընկնում է կուլակի ճանկը, նրանից մի փութ ալյուր եւ վերցնում, իսկ դրա համար նա հետո շատ է տուժում, խրվում է այդ մի փութ ալյուրի պարտքի մեջ ու տակից դուրս գալ չի կարողանում: Հաճախ նույնպիսի դրութեան մեջ է ընկնում եւ միջակ գյուղացին: Ահա թե ինչո՞ւ թե աղքատ եւ թե միջակ

գյուղացիները միեւնոյն նպատակներն ունեն ու միեւնոյն գիծը պիտի բռնեն, յերբ ընտրում են գյուղխորհուրդ, փոխոգնութեան կոմիտե, կոոպերատիվի վարչութիւն եւ այլն: Արդյոք բառարակը, միջակ ու աղքատ գյուղացու դեմ կովելու վորեւ պատճառ ունի՞: Վո՛չ, չունի: Նրանք խորհրդային իշխանութեան բարեկամներն են: Բառարակը պետք է բարեկամութիւն ստեղծի միջակ ու աղքատ գյուղացիութեան հետ: Նա պետք է պաշտպանի ու ամրապնդի այդ միութիւնը: Յետեւ մենք կովենք միջակ գյուղացիութեան հետ, դա վոչ թե մեր, այլ մեր թշնամիների ոգուտը կլինեն: Կապիտալիստներն ու կալվածատերերը շատ կուզեյին մեզ կովեցնել միջակ գյուղացիութեան հետ: Նրանց հարկավոր է, վոր մենք կովենք իրար հետ, բաժանվենք, վորպէսզի ամեն մեկիս հետ առանձին-առանձին հեշտութեամբ հաշիվ տեսնեն: Բայց մենք այդ չենք անի եւ այդ ուրախութիւնը չենք պատճառի նրանց: Ահա թե ինչո՞ւ պետք է ամրապնդել բանվորների ու գյուղացիների միութիւնը՝ բանվոր դասակարգի զեկավարութեամբ: Գյուղական ու անտառային բանվորները, վորպէս բանվոր դասակարգի մի մասը, պիտի ոգնեն—ամրապնդել այդ միութիւնը: Այս հարցի մասին լավ պիտի մտածել: Շատ բառարակներ դանդաղում են, թե գյուղխորհուրդները իրենց նեղացնում են: Ի՞նչո՞ւ յե այդպես: Վորովհետեւ շատ անգամ գյուղխորհուրդում նրանք չեն նստած, ովքեր վոր պետք է լինեն—աղքատ ու միջակ գյուղացիներ կամ բառարակներ չեն, այլ ունենոր գյուղացիներ—կուլակներ են նստած գյուղխորհուրդներում: Մի՞թե չգիտեք, վոր ասում են «ազոնավն ազոնավն աչքը չի հանի»: Գյուղխորհուրդների ընտրութիւնների ժամանակ անպատճառ պիտի միանալ աղքատ ու միջակ գյուղացիութեան հետ

և ընտրել բատրակներ, միջակ ու աղքատ գյուղացիներ:
Այս ձևով միայն մենք կարող ենք լավացնել գյուղ-
խորհուրդները:

ԱՐԴՅՈՔ ԲԱՏՐԱԿԸ ՄԻՇՏ ԲԱՏՐԱԿ ՊԻՏԻ ՄՆԱ

Հետևյալ հարցը, վոր շատ անգամ ենք լսում, այն է,
թե բատրակը միշտ էլ բատրակ պիտի մնա և ինչ ճա-
նապարհ գտնել, բատրակությունից ազատվելու համար:
Վոմանք կարծում են, թե բավական և բատրակներին:
հող տալ և նրանք գուրս կգան այդ դրությունից: Ըն-
կերներ, կարեւորն այն չէ, վոր հող տրվի. դա գրու-
թյունը չի փրկի: Հողը ուտել չի կարելի, հարկավոր է
այդ հողը դեռ մշակել, իսկ դրա համար պետք է ունե-
նալ գործիքներ, յեղներ, սերմ և այլն: Դուք գիտեք,
վոր կան շատ բատրակներ, վորոնք պարզապես վոչինչ
չունեն: Ինչ գումար պետք է տալ վոչինչ չունեցող բա-
տրակին, վորպեսզի նա իսկապես տնտեսության տեր
գառնա: Պետք է տալ մոտ յերկու հազար ուրբի: Ըստ
թվական տվյալների ԽՍՀՄ-ում ամենաքիչը մի միլիոն
այդպիսի բատրակ կա: Յեւ ուրեմն, վորպեսզի այդ բո-
լորին տնտեսության տեր դարձնենք, ամենաքիչը յերկու
միլիարդ վոսկի ուրբի յե հարկավոր: Բացի այդ մենք
ունենք մոտ 2 միլիոն այնպիսի բատրակներ, վորոնք
վորոշ բան ունեն, բայց այնքան քիչ, վոր գրանով տրն-
տեսություն ղեկավարել ու ապրել չի կարելի: Դրանց
նույնպես հարկավոր է տալ սսենք՝ ամենքին մոտ հա-
զար ուրբի: Դա էլ ուրեմն կանի մոտ 1 և կեսից 2 մի-
լիարդ ուրբի: Ուրեմն, գուրս է գալիս, վոր հարկա-
վոր կլինի ծախսել 3-4 միլիարդ ուրբի: Բայց ցավն էլ
այն է, վոր Խորհրդային իշխանությունը չունի այդ-
պիսի գումարներ: Յես տեսել եմ յերկու բատրակ, վո-

րոնք գործ էյին փնտրում: Նրանց հող էյին տալիս,
բայց նրանք չէյին վերցնում: «Ինչների՞ս է պետք հողը,
քանի վոր մենք մեր ձեռքերից բացի ուրիշ վոչինչ չու-
նենք» ասում էյին նրանք: Իսկ պետությունս այժմ չի
կարող բատրակներին յայն համերով ոգնել, տալ գոր-
ծիքներ, սերմացու և այլն: Դրա համար էլ, բատրակը
իր գրությունը լավացնելու համար գլխավորապես այս
ուղղությամբ չպիտի աշխատի: Դուք գիտեք, վոր սպա-
ռողական կոոպերացիան համախմբում է սպառող մարդ-
կանց, իսկ գյուղատնտեսական կոոպերացիան համա-
խմբում է տնտեսությունները: Գյուղատնտեսական կո-
ոպերացիայի անդամ լինելու համար պետք է ունենալ
տնտեսություն: Բատրակության մեծ մասը իր սեփա-
կան տնտեսությունը չունի: Բայց հարկավոր է արդ-
յոք կոոպերացման յենթարկել բատրակներին այն մասը,
վոր վորոշ տնտեսություն ունի: Մենք կասենք, վոր ան-
պատճառ հարկավոր է այդ անել: Հարկավոր է, վոր
այդ գործը սկսի գյուղատնտեսական կոոպերացիան,
իսկ միությունը կոգնի նրան կազմակերպել կոլլեկտիվ
տնտեսություններ: Բայց միայն թե, այդ կոլլտնտեսու-
թյունները ձեռնալ չլինեն: Այդպիսի կոլլտնտեսու-
թյուններ պիտի կազմակերպել միայն այն դեպքում,
յեթե նրանք ապահովված կլինեն անհրաժեշտ բաներով:
Իսկ յեթե կոլլտնտեսությունները կազմվեն աղքատ գյու-
ղացու և բատրակի տնտեսությունից, վորոնք բացի մի
կոտրած գութանից ու անպետք յեղից ավել ուրիշ բան
չունեն, պարզ է, վոր այդ կոլլտնտեսությունից վոչ մի
ոգուտ ստանալ չի կարելի: Հարկավոր է կազմել կոլլ-
տնտեսություններ: Միությունը կոգնի այդ գործին:
Բայց պետք է այդ գործն սկսել այն դեպքում, յերբ
գյուղատնտեսական կոոպերացիան և ուրիշ մարմին-
ները լուրջ ոգնություն ցույց կտան, յեթե այդ կոլլ-
տնտեսությունները լավ հիմքերի վրա կգրվեն:

Ուրեմն՝ բատրակը մի՞շտ բատրակ պիտի մնա: Ի՞նչ կարող է սպասել նա մոտիկ ապագայում: Նա, վորպես վարձու բանվոր, պիտի սպասի, վոր մոտ ապագայում կլավանա իր դրությունը: Նա պետք է աշխատի իր միության միջոցով բարձրացնել իր աշխատավարձը, բարելավել իր դրությունը, ստանալ բնակարան, և այլն և այլն: Ի հարկե, բատրակը միշտ բատրակ չի մնալու: Կոմունիզմի ժամանակ չեն լինելու վոչ բատրակ, վոչ չքավոր, վոչ միջակ և վոչ կուլակ: Բոլորը լինելու չեն քաղաքացիներ, ամեն մեկն ստանալու չե աշխատանք, ինչքան իրեն հարկավոր է և հասարակությանը տալու չե աշխատանք, ինչքան իր ուժը իր ընդունակությունը թույլ կտան: Բայց մինչև կոմունիզմին հասնելը մենք դեռ չառ պիտի չարչարվենք, դեռ չառ պիտի աշխատենք: Արդյոք կհասնե՞նք կոմունիզմի: Անկասկած կհասնենք: Դրա ապացույցն է խորհրդային յերկրի աճումն ու ամրապնդումը և արտասահմանի պրոլետարիատի հեղափոխական գիտակցության բարձրացումը:

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ» ՅԵՎ ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

Շատերը գանգատվում են, թե «ժամանակավոր կանոններ»-ն ընդունելուց հետո կուլակներն ասում են, թե «մենք ինքներս, առանց միության մասնակցության, պայմանագիր կկապենք բատրակի հետ»: Ի հարկե, «ժամանակավոր կանոնները» և ամեն մի ուրիշ որեւէ, ամեն մի կետ, ամեն մի բառ կուլակը իր ոգտին կրացատրի: Այդ մենք առաջուց պիտի ասենք:

Իսկ ի՞նչ է մեր անելիքը: Մեր անելիքն այն է, վոր «ժամանակավոր կանոնները» բացատրենք մեր ոգտին: Ասում են, թե բատրակներն իրենք պիտի պայմանագիր կնքեն տերերի հետ, առանց միության մասնակցու-

թյան: Ճիշտ է, «ժամանակավոր կանոններ»-ի մեջ ասվում է, վոր ամեն մի բատրակ կարող է վարձողի հետ պայմանագիր կնքել առանց միության մասնակցության: Միությունը կամավոր կազմակերպություն է: Ուղո՞ւմ էս լինել միության անդամ՝ յեղիր, չե՞ս ուղում, քեզ դոռով քաշ տվող չկա: Մենք վոչ վոքի դոռով չենք ստիպում միության մեջ մտնել: Միությունը բանվորների կամավոր կազմակերպությունն է, իրենց բանվորների կամավոր կազմակերպությունն է, իրենց չահերը պաշտպանելու համար, բանվորներին դաստիարակելու համար և նախապատրաստելու, վոր կարողանան ղեկավարել տնտեսությունն ու բանվորական պետությունը: Միությունը կոմունիզմի դպրոցն է: Ահա թե ինչպես է դրված հարցը:

Միության անդամ լինելու համար հարկավոր է վորոշ չափով ղեկավարել լինել: Գիտակից բանվորը գիտե, վոր իրեն համար ավելի ձեռնտու չե, չեթե պայմանագիր կնքելիս միությունն էլ մասնակցի: Յեվ իսկապես, մի բատրակին առանձին չառ հեշտ է խաբել և նեղացնելը, բայց միութենական կազմակերպությանը խաբել չեա կարող: Մեր նպատակն այն չե, վոր որեւէ քում դրված լինի, թե «պայմանագիր կնքիր միության միջոցով», այլ այն, վոր ինքը բատրակը հասկանա, թե իրեն ձեռնտու չե միության հետ լինել, վոր ինքն անձամբ գնա միության շարքերը: Այո, մի ժամանակ մենք չառ ելինք զործադրում «ազմինխտրատիվ ճնշումը», այդ ժամանակ առաջարկում ելինք կամ ստորագրել պայմանագիրը կամ տուգանք վճարել: Դա ի հրակե հեշտ է:

Բայց դա սխալ էր: Այժմ այդ սխալն ուղղվում է: Այժմ մենք մեր աշխատանքը պիտի կառուցենք բատրակների գիտակցության և ինքնազործունեության վրա: Ասում են, վոր իրենք բատրակները հաճախ դա-

լիս են և տառա, «մեզ համար պայմանագիր միք կնքի»: Մի քանիսը սրանով ուզում էին ցույց տալ աշխատանքի դժվարութիւնն ու վարչական կարգով ճնշում գործադրելու անհրաժեշտութիւնը: Բայց միթե այդ նույնը չկա՞ քաղաքներում: Միթե՞ քաղաքում մութ ու անգիտակից բանվորը չի գալիս ու տառա, «միք անհանգստացնի իմ տիրոջը, թե չե ինձ դուրս կանի»: Գյուղում այգայիսի գեպերը ավելի շատ են: Ինչո՞վ բացատրել այդ խավարով, մթությամբ, անգիտակից լինելով: Վո՞րն է մեր ներկայիս խնդիրը: Այն, վոր համբերությամբ, աստիճանաբար դուրս բերենք բաւարակին այդ խավարից, բացատրենք նրան որենքները, հասկացնենք նրան դրութիւնը և ցույց տանք, թե ի՞նչ ճանապարհով կարող է լավացնել իր դրութիւնը: Կարող է պատահել, վոր աշխատանքն ընթանա շատ ավելի դանդաղ, քան մենք ենք ցանկանում, բայց ուրիշ ճանապարհ չկա: Թող մենք ունենանք վոչ թե 1,000 այլ 200 անգամ, բայց այնպիսի անդամներ, վորոնք արդեն հասկացել են միության կարեւորութիւնն ու ոգտակարութիւնը իրենց համար և վոչ թե միության մեջ են մտել ստիպմամբ, գոռով ու վախից զրգված:

Այն հարցին, թե ի՞նչպես պիտի վարվել կոնֆլիկտների ժամանակ, պիտի պատասխանել, վոր կոնֆլիկտները լուծելու միջոցներից մեկը պիտի լինի հաշտարար հանձնաժողովը: Շատերը գանգատվում էին, թե կոնֆլիկտային գործերը յերկար ժամանակ, 5—6 ամսով պտուկում են դատարաններում: Հասկանալի չէ, վոր վոչ մի դատարան չի կարող ղլուխ հանել, չէթե ամեն մի կոնֆլիկտ դատարան քաչ տան: Այստեղ խոսողներից վոչ մեկը չհիշեց հաշտարար հանձնաժողովների մասին, վորոնք պիտի գոյութիւն ունենան չրջգործկոմներին կից: Ըստ յերեւոյթին այդ չրջանա-

լին հաշտարար հանձնաժողովները չեն կիրառվում: (Տեղից. «այստեղ չկան այգայիսի հանձնաժողովներ»): Ահա հենց դա չէ վատը: Դա շատ մեծ սխալ է: Ամենից առաջ—ի՞նչ է հաշտարար հանձնաժողովը: Դա մի մարմին է, վորի մեջ մտնում են վարձողը, միության ներկայացուցիչը և չրջգործկոմի նախագահը (կամ ոգտականը): Ի՞նչպես պիտի վարվել կոնֆլիկտի ժամանակ: Պետք է առաջարկել վարձողին բավարարել բաւարակի արդար պահանջը և պիտի պատասխանի համար ժամանակ տալ, ասենք 2—3 օր: Յեթե այդ ժամանակ կից հետո պահանջը չի բավարարված, այդ ժամանակ հարցը պիտի հանձնել հաշտարար հանձնաժողովին: Այդտեղ արդեն խոսակցութիւնը իշխանության ներկայացուցչի ներկայությամբ կլինի և ավելի հեշտույթյամբ կարելի կլինի համաձայնության գալ: Ահա, յերբ այգայիսի հաշտարար հանձնաժողովում համաձայնության չեն գալ, այն ժամանակ պետք է ղիմել դատարան, կամ ուրիշ միջոցներ ձեռք առնել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎՐԱ

Հետեյալ հարցը, վոր այստեղ շոշափվեց, դա միության անդամների հարցն է: Անցյալում մենք չէինք տարբերում միության անդամներն ու վոչ անդամները, յերբ ոգնում էինք նրանց. և դա շատ ճիշտ էր: Յեկեք ասենք, վոր այժմ էլ միութենական կազմակերպութիւնը պաշտպանում ու ներկայացուցիչն է ամբողջ բաւարակության: Մենք խոսում ենք վոչ թե միայն միության անդամ բաւարակների անունից, այլ բոլոր բաւարակների անունից և պաշտպանում ենք ամբողջ բաւարակության շահերը: Բայց մենք, պետք է միության անդամների ու միութենական կազմակերպության համար ավելին անենք, քան վոչ-միության

անդամների համար: Որինակ՝ անգրագիտութեան՝ վերացման հարցը. ո՞ւմ պետք է առաջին հերթին ուղարկել լիկկայան: Պարզ է, վոր միութեան անդամին: Միութեանը առաջին հերթին ո՞ւմ պիտի ուղարկել ուշխատանքի. պարզ է, միութեան անդամին և այլն: Մեր առորյա գործնական աշխատանքների ընթացքում մենք միութեան անդամի վրա ավելի մեծ ուշադրութեան պիտի դարձնենք, ավելի շատ ոգնենք, քան վոչանդամին:

Միութեան գործադուրկ անդամների համար մենք ֆոնդ ունենք, վորից կարող ենք ոգնել միութեան անդամներին, իրենց նեղ որերին: Բայց վոչ-միութեան անդամներին այդ ֆոնդից ոգնել չենք կարող: Մենք խոսում ենք ամբողջ բաարակութեան անունից, բայց մեր գործնական աշխատանքի ընթացքում մենք առավելութեան ենք տալիս միութեան անդամներին:

Ամեն մի բաարակ, վոր ուղում է ունենալ այդ տառվելութեանը, պիտի միութեան անդամ լինի: Բայց և այնպես, մենք չպիտի մոռանանք, վոր վոչ միութեան անդամ բաարակը մեր թշնամին չէ, դրա համար էլ, յերբ մեր գործնական աշխատանքի ընթացքում նա մեզ գիմի խորհուրդ կամ ոգնութեան ստանալու, մենք պետք է վորքան հնարավոր է ոգնենք նրան:

ՊԵՏՔ Ե ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՆՈՒԹՅՈՒՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Հետեյալ հարցը, վորի վրա յես ուղում եմ կանգ առնել, դա իրավարանական ոգնութեան հարցն է: Մեր բաարակները շատ հաճախ դատարաններում անողնադ կան են մնում: Նրանց պետք է ոգնութեան դալ: Այդ գործը բարդ գործ է: Յեթե մենք փող և մարդ ունենայինք, ամեն մի շրջանում մի իրավաբան կպահե-

լինք: Իսկ առայժմ այդ կարելի չէ անել, յեթե վոչ բոլոր, գոնե մի քանի գաղափարում: Այնտեղ, ուր այդ չի կարելի անել, կարելի չէ պայմանավորվել ժող. դատավորի հետ, վոր նա ոգնութեան դա մեր բաարակներին, խորհուրդներ տա: Գուցե և կարելի լինի պայմանավորվել շրջանի ինտելիգենցիայի հետ, վոր նրանք իրավական ոգնութեան հասցենն բաարակներին, յերբեմն դուրս գան նրանց պաշտպանելու: Ինչ ճանապարհով ել լինի, անհրաժեշտ է կադմակերպել իրավական ոգնութեանը:

ՊԵՏՔ Ե ՀԵՏԵՎԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ԿՅԱՆՔԻ ՄԵՋ ԿԻՐԱՌՄԱՆԸ

Հետեյալ հարցը աշխատանադրի ստուգումն է: Գրուշի արժեք չունի այն աշխատանադիրը, վոր չի ստուգվում թե՛ իրագործվում է, թե վոչ: Այստեղ ճիշտ ասած բաարակ Մոսին, վոր յերբ չի ստուգվում պայմանադրի իրագործումը, այդ պայմանադիրը բաարակի համար ճորտադիր է դառնում, վորովհետեւ տերը դրա համար վրեժ է առնում բաարակից: Ասում են, թե մի հոգին—շրջկոմի քարտուղարը չի կարող բոլոր պայմանադրերն ստուգել: Բայց մեր ցավը հենց այն է, վոր շրջկոմը կարծում է, թե ինքը մենակ է: Ամենին ել այդպես չէ: Կա՞ շրջանային կոմիտե, կա՞ բաարակկոմ, ուրեմն՝ կան և անդամներ, կան միութեան անդամ բաարակներ: Արդյոք բաարակներին այդ աշխատանքի մեջ քաշելու փորձ յեղե՞լ է: Վո՛չ, այդպիսի փորձ չի յեղել: Շատ աշխատակիցներ կարելի չէ ոգտագործել, վորոնք լավ ոգնականներ կլինեն: Հարկավոր է միայն մի քիչ նեղութեան քաշել այդ գործի համար:

ՏԵՐԸ ԶԻ ԿԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻՅ ԶԵՂՋԵՐ ԱՆԵԼ

Այնուհետև խոսենք աշխատավարձից զեղջեր անելու, պակասեցնելու մասին: Յեւ ասացի, վոր տերը իրավունք չունի զեղջեր անելու, բայց ելի ասում են, վոր շատ հաճախ տրվում է այդ: Նորից ընդդժում ու չեչում եմ, վոր տերը վոչ մի իրավունք չունի այդպիսի զեղջեր անելու: Յեթև անում է, ուրեմն խախտում է սրենքը: Իսկ սրենքը խախտելու համար վարձույր պատժվում է Քրեական Որենագրքի 132-րդ հոդվածով: Այդ մասին ել սրենքում գրված է: Բայց տեսնում եք, ձեզանից շատերը չեն կարդացել սրենքը: Ասում են, թե վորտե՞ղ կարդացինք «Ժամանակավոր կանոնները», վո՞րտեղ դանենք: «Ժամանակավոր կանոնները» տպագրվել է և կպցրած են գյուղխորհուրդներին պատերին:

ԳՊՐՈՅ ԳՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՈՒՅ ՊԻՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ

Բարձրագույն դպրոց ուղարկելու մասին: Այս տարի մենք մի քանի տասնյակ բաժնակներ ուղարկեցինք բարձրագույն դպրոցներ: Մի քանիսի համար ստիպված չեղանք պարտավորվել, վոր կոգնենք ու կսովորեցնենք, թե չե թույլ ելին, չե չին ընդունվում: Պետք է բաժնակներին առաջ քաշել, բայց միութենական կազմակերպությունները պետք է առաջուց հոգ տանեն, վոր տեղում նախապատրաստվի նա, վորին մտադիր են ուղարկել բարձրագույն դպրոց: Դա պետք է անել իր ժամանակին, առանց ուշացնելու: Պետք է ընտրել նրանց, վորոնց պետք է ուղարկել և միջոցներ ձեռք առնել, վոր նրանք իրենց տեղում նախապատրաստվեն:

Այժմ թույլ ավելք մի քանի կետեր ել հիշել և սրանով ել կվերջացնեմ: 1922 թվին մեր միության տեղա-

կան համագումարները սովորաբար սկսվում էին ցերեկվա ժամը 12-ին և վերջանում էին նույն օրը յերեկոյան ժամը 6-ին: Համագումարներին ներկա էին լինում 15—20 հոգի: Այժմ պատկերը միանգամայն փոխվել է: Մեր միության համագումարներին արդեն լինում են 100—150—200 հոգի: Համագումարին յեկել են իսկական գյուղատնտեսական ու անտառային բանվորներ: Յեկել են լիակատար հավատով զեպի իրենց ուժերը, կազմակերպություն կարողություն: Յեկել են այն ցանկություններ, վոր վորքան կարելի չե լավ կառուցեն իրենց կազմակերպությունը, կանոնավորեն իրենց պատիարակման գործը, բարելավեն իրենց նյութական վերլթյունը: Միության աշխատակիցներն ու անդամները հպարտանում են այս ամենի համար, այս նվաճումների համար: Յեւ կարծում եմ, վոր 1—2 տարի հետո մեր միությունը իր ամբողջությամբ և ուժով կլինի մեկը այն միություններից, վորոնք կարևորագույն դերն են խաղալու բանվոր դասակարգի կոմունիզմի համար մզվող պայքարում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ

1. Հանձնարարական աշխատանքներ
2. Կրթական հաստատությունների կազմակերպություն
3. Կրթական հաստատությունների կազմակերպություն
4. Կրթական հաստատությունների կազմակերպություն
5. Կրթական հաստատությունների կազմակերպություն
6. Կրթական հաստատությունների կազմակերպություն
7. Կրթական հաստատությունների կազմակերպություն
8. Կրթական հաստատությունների կազմակերպություն

Կրթական հաստատությունների կազմակերպություն
Կրթական հաստատությունների կազմակերպություն
Կրթական հաստատությունների կազմակերպություն

Կրթական հաստատությունների կազմակերպություն

<< Ազգային գրադարան



NL0198396

ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐԶՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. «Բաաբակ, լսիր Լենինին» պրակատ չորս գույնով 10 կ.
2. Լ. Լաբուրյուն. — «Բաաբակ, կնքիր պայմանագիր»
վտանաւորով 35 յեր. 5 կ.
3. Վ. Կուլիկով. — «Ինչպէս պետք է կազմակերպել
ու դաստիարակել բաաբակներին և
պաշտպանել նրանց շահերը» 43 յեր. 15 կ.
4. «Գյուղանտառ բանվորների արմիության կանո-
նադրութունը» (տպագրւում է)
5. «Գյուղանտառ արմիության Համաժողովներին
V համագումարի վորոշումները»
(տպարաստւում է տպագրւթյան հանձնելու)

Դ Ի Մ Ե Լ՝ Գյուղանտառ բանվորների արմիության կեն-
տրոնական վարչության. — Յերեան, աշխատանքի
պալատ սենյակ № 13 և միության գաղթածին-
ներին:

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊԵԿ